

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձն Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

30.12.2013

Արմավիրի մարզի սիրելի բնակիչներ,

Պատմության գիրկն անցավ աշխատանքային լարվածությամբ հագեցած ևս մեկ տարի: 2013 թվականը մնաց մեր թիկունքում՝ թողնելով փորձության մի ժամանակաշրջան, երբ բոլորիս կամքի, միասնության և անկոտրում ջանքերի շնորհիվ նահանջեցին բնության տարերքից առաջացած դժվարությունները:

Տարեմուտն այն եզրագիծն է, երբ ի մի ենք բերում անցնող տարվա արդյունքները ոչ միայն տնտեսության վերընթացի, այլև կրթամշակութային, առողջապահության և մեր համընդհանուր կյանքի բովանդակային մյուս ոլորտներն ամբողջությամբ վերցրած:

Ինչ խոսք, 2014 թվականի երջանկաբեր մուտքն իր հետ բերում է նաև մի նոր պատասխանատվություն: Գնահատելով ձեռք բերածը՝ ամուր հիմքերի վրա պետք է ուրվագծենք վաղվա մեր ծրագրերը, անդրադառնանք նաև չլուծված խնդիրներին, անենք ամեն ինչ, որ էլ ավելի բարեկեցիկ ու արժանապատիվ կյանք ստեղծվի մեր բնակչության համար:

Հայացքը միշտ ապագային, կարող եմ նշել, որ մեր ընդհանուր գործունեությանը զուգընթաց՝ մեզ հաջողվել է կապեր հաստատել արտասահմանյան մի շարք երկրների հետ, նախադրյալներ ստեղծել մարզի տնտեսության հեռանկարային խնդիրների լուծման ուղղությամբ:

Վստահ եմ, որ այս Նոր տարում Ձեր կամքն ու ստեղծագործական ավյունը դարձյալ կլինեն մեր ընդհանուր առաջընթացի շարժիչ ուժը, հանձին Ձեզ՝ էլ ավելի ծաղկուն ու հզոր կդարձնենք Արարատյան դաշտի մեր հինավուրց եզերքը:

Մի րելի բարեկամներ, Ամանորը միաժամանակ նվիրական երազանքների, անձնական լուսավոր հույզերի, սպասումների ու հավատի անմոռաց տոն է:

Բոլորիդ օջախներում թող զրնգա ուրախությունը և ընտանեկան մեծ երջանկություն բերի Ձեզ ու Ձեր զավակներին:

Թող խաղաղությունը թևածի Հայոց աշխարհի երկնակամարում:

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

*Լավագույն մաղթանքներով՝
ՀՀ Արմավիրի մարզպետ
ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*